ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎՀ-ՄԱ-ԱՊՁԲ-19/04/2

ք. Վայք «16» ապրիլի 2019թ.

Վայքի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար Թ.Ավետյանի, որը գործում է օրենքի հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ<<Աշոտ Գասպարյան>>-ն, ի դեմս տնօրեն Աշոտ Գասպարյանի , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 390800 (երեք հարյուր իննսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

իականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Վայք համայնքապետարան	Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>>
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	ք. Վայք, Շահումյան 18/1
Հ/Հ 900342121028	<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>>
ՀՎՀՀ 08913477	ՓԲԸ Վայք մասնաճյուղ
Համայնքի ղեկավար	Հ/Հ220449670128000
Թ. Ավետյան	ՀՎ/ՀՀ 76808073
	Ան. ձեռնարկատեր՝ Ա.Գասպարյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	30192710	սոսնձամատիտ, գրասենյակային	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար, անվտանգությունը համապատասխան ԳOUS-ի	հատ	240	4800	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
2	30193700	թղթադարակ, հարկերով, պլաստմասե	թղթադարակ, հարկերով, պլաստմասե,նվազագույնը 4 հարկ	հատ	2800	5600	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
3	30194820	եռանկյուն քանոն	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ, պլաստմասե կամ փայտյա	հատ	180	1800	10	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	10	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
4	30197100	կարիչի մետաղալարե կապեր, մեծ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով	տուփ	150	3750	25	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	25	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
5	30197112	կարիչի մետաղալարե կապեր, միջին	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր տուփերով,միջին	տուփ	100	4000	40	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	40	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
6	30197120	կոճգամներ	Մետաղյա, սովորական:	տուփ	150	2250	15	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	15	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

7	30197220	թղթի ամրակներ	գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ	հատ	25	1250	50	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	50	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
8	30197231	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակալներին ամրացնելու հնարավորություն:	հատ	10	15000	1500	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	1500	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
9	30197232	թղթապանակ, արագակար, թղթյա	թղթապանակ, արագակար, թղթյա, A4 ֆորմատի թղթերի համար	հատ	80	1600	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
10	30197234	թղթապանակ, կոշտ կազմով	թղթապանակ կոշտ կազմով,արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	950	19000	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
11	30197322	կարիչ, 20-50 թերթի համար	Գրասենյակային կարիչ մինչև 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	2300	11500	5	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	5	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
12	30197332	դակիչ միջին	դակիչ միջին,A4 ֆորմատի թղթերի դակելու համար	հատ	1800	5400	3	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	3	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

13	30197622	թուղթ, A4 ֆորմատի	A4, չկավճած բարձր որակի թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված:Խտությունը՝ առնվազն 80 գ/մ2 (առանց շեղումների) Չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանց շեղումների),Առանց փայտային խեժի և զազանման քլորի պարունակության Նախատեսված՝միակողմանի և երկկողմանի տպագրության համարՊիտանի՝լազերային, թանաքաշիթային և օֆսետ տպագրության համար Սպիտակությունը՝ ոչ պակաս 170%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ,Արխիվային պահպանման ժամկետ՝ ոչ պակաս քան 150 տարի,Գործարանային փաթեթավորմամբ Յուրաքանչյուր տուփում թերթերի քանակը՝ 500 հատ (առանց շեղումների)Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ ISO 14001	կգ	800	240000	300	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	300	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
14	30199230	նամակի ծրար, A5 ձևաչափի	Ծրար՝ A5 ձևաչափի, 90 % սպիտակության, ինքնասոսնձվող:	հատ	40	4000	100	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	100	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
15	30199232	նամակի ծրար, A4 ձևաչափի	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով, ինքնասոսնձվող:	հատ	60	1500	25	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	25	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
16	30199238	նամակի ծրար, A6 ձևաչափի	Ծրար՝ A6 ձևաչափի, 90 % սպիտակության, ինքնասոսնձվող:	հատ	15	2550	170	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	170	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
17	30199420	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	թուղթ նշումներ կատարելու համար ,սոսնձվածքով, տարբեր գույների , փոքր:	հատ	200	4000	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

18	30234300	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	հատ	140	4200	30	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	30	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
19	30234620	ֆլեշ հիշողություն, 4GB	ֆլեշ հիշողություն, 4GB	հատ	2400	4800	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
20	30234630	ֆլեշ հիշողություն, 8GB	ֆլեշ հիշողություն, 8GB	հատ	2500	15000	6	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	6	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
21	30237220	մկնիկի տակդիրներ	մկնիկի տակդիր, գույնը՝ սև , հատակի մասը ռետինից,	հատ	500	1000	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
22	30237250	համակարգիչների մաքրման պարագաներ	համակարգիչների մաքրման պարագաներ	հատ	1000	2000	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
23	30237411	մկնիկ, համակարգչային, լարով	մկնիկ, համակարգչային, լարով,գույնը՝ սև	հատ	2800	2800	1	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	1	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
24	30141200	հաշվասարք, գրասենյակային	հաշվասարք, գրասենյակային, սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	2300	6900	3	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	3	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
25	30191130	թղթի տակդիր՝ սեղմակով	թղթի տակդիր՝ սեղմակով A4 ֆորմատի թղթերի համար մետաղյա սեղմակով	հատ	900	1800	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայմանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

26	30192100	ռետին հասարակ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	80	800	10	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	10	պայանագրի կնք օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
27	30192114	թանաք, կնիքի բարձիկի համար	թանաք, կնիքի բարձիկի համար, գույնը՝ կապույտ:Նվազագույնը 20 գ տարողությամբ	հատ	240	1920	8	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	8	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
28	30192111	թանաքի բարձիկներ	թանաքի բարձիկներ՝տուփով	հատ	500	2000	4	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	4	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
29	30192121	գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի:	հատ	50	2000	40	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	40	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
30	30192125	մարկերներ	տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի:	հատ	240	480	2	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	2	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
31	30192128	գրիչ գելային	գրիչ գելային , տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի:	հատ	100	2000	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
32	30192131	սրվող մատիտներ	Սովորական, հասարակ, սև գույնի 2HB կարծրությամբ, ռետինով	հատ	50	1000	20	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	20	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

33	30192133	սրիչներ	Սրիչ գրաֆիտե մատիտի համար,սրվող շեղբերը հավաքող տարրայով	հատ	150	600	4	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	4	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
34	30192160	շտրիխ	շտրիխ սպիտակ գույնի ,գրչանման կառուցվածքով	հատ	200	2400	12	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	12	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
35	39263200	գրասենյակային գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով	գրասենյակային գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի, սպիտակ էջերով	հատ	850	10200	12	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	12	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի
36	30192231	սկոչ	սկոճ մեծ սպիտակ թափանցիկ մի կողմանի սոսնձվածքով	հատ	300	900	3	ՀՀ Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք.Վայք Շահումյան18	3	պայանագրի կնքման օրվանից ամսեկան ըստ պատվիրատուի պահանջի

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

Վայք համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>>
ք. Վայք, Շահումյան 18/1
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>>
ՓԲԸ Վայք մասնաճյուղ
Հ/Հ220449670128000
ՀՎՀՀ 76808073
Ան. ձեռնարկատեր՝ Ա.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում**			
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	30192710	սոսնձամատիտ, գրասենյակային	1584	3168	4800	4800
2	30193700	թղթադարակ, հարկերով, պլաստմասե	1848	3696	5600	5600
3	30194820	եռանկյուն քանոն	594	1188	1800	1800
4	30197100	կարիչի մետաղալարե կապեր, մեծ	1238	2475	3750	3750
5	30197112	կարիչի մետաղալարե կապեր, միջին	1320	2640	4000	4000

6	30197120	կոճգամներ	743	1485	2250	2250
7	30197220	թղթի ամրակներ	413	825	1250	1250
8	30197231	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	4950	9900	15000	15000
9	30197232	թղթապանակ, արագակար, թղթյա	528	1056	1600	1600
10	30197234	թղթապանակ, կոշտ կազմով	6270	12540	19000	19000
11	30197322	կարիչ, 20-50 թերթի համար	3795	7590	11500	11500
12	30197332	դակիչ միջին	1782	3564	5400	5400
13	30197622	թուղթ, A4 ֆորմատի	79200	158400	240000	240000
14	30199230	նամակի ծրար, A5 ձևաչափի	1320	2640	4000	4000
15	30199232	նամակի ծրար, A4 ձևաչափի	495	990	1500	1500
16	30199238	նամակի ծրար, A6 ձևաչափի	842	1683	2550	2550
17	30199420	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	1320	2640	4000	4000

18	30234300	դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	1386	2772	4200	4200
19	30234620	ֆլեշ հիշողություն, 4GB	1584	3168	4800	4800
20	30234630	ֆլեշ հիշողություն, 8GB	4950	9900	15000	15000
21	30237220	մկնիկի տակդիրներ	330	660	1000	1000
22	30237250	համակարգիչների մաքրման պարագաներ	660	1320	2000	2000
23	30237411	մկնիկ, համակարգչային, լարով	924	1848	2800	2800
24	30141200	հաշվասարք, գրասենյակային	2277	4554	6900	6900
25	30191130	թղթի տակդիր՝ սեղմակով	594	1188	1800	1800
26	30192100	ռետին հասարակ	264	528	800	800
27	30192114	թանաք, կնիքի բարձիկի համար	634	1267	1920	1920
28	30192111	թանաքի բարձիկներ	660	1320	2000	2000
29	30192121	գրիչ գնդիկավոր	660	1320	2000	2000

30	30192125	մարկերներ	158	317	480	480
31	30192128	գրիչ գելային	660	1320	2000	2000
32	30192131	սրվող մատիտներ	330	660	1000	1000
33	30192133	սրիչներ	198	396	600	600
34	30192160	շտրիխ	792	1584	2400	2400
35	39263200	գրասենյակային գիրք, մատյան, 70-200 էջ, տողանի,	3366	6732	10200	10200
36	30192231	սկոչ	297	594	900	900

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

Վայք համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121028
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ <<Աշոտ Գասպարյան>>
ք. Վայք, Շահումյան 18/1
<<ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>>
ՓԲԸ Վայք մասնաճյուղ
Հ/Հ220449670128000
ՀՎ/ՀՀ 76808073
Ան. ձեռնարկատեր՝ Ա.Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ